ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:kanach@yerevan.am

Հ/Հելից72/Դ1882 «26» հուլիսի 2021թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Գ.ՆԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նազարյան

Ի պատասխան քաղաքացի Շուշան Դոյդոյանի 21.07.2021թ. հ.Դ1882 դիմումի՝ հայտնում եմ, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Թափոնների տեսակավորման վարչությունը զբաղվում է Երևան քաղաքում վերամշակման ենթակա թափոնների՝ ապակու, թղթի և պլաստիկի հավաքմամբ, որոնք հանձնվում են «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի հետ պայմանագիր կնքած վերամշակող կազմակերպություններին: Ներկայումս Երևան քաղաքում՝ 135 կետում տեղադրված են տեսակավորման համար նախատեսված թափոնամաններ:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ չունենք լիազորություն պարտադրելու որևէ տնտեսվարող սուբյեկտի տեղադրել աղբի տեսակավորման համար նախատեսված արկղեր կամ իրականացնել տեսակավորման աշխատանքներ: «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ը կարող է միայն առաջարկել և հորդորել նման աշխատանքների իրականացմանը, ինչը կատարվում է մեր կողմից իրազեկման աշխատանքների ընթացքում:

Տնօրենի տեղակալ, տնօրենի ժ/պ՝ Գ. Կարապետյան